HEINRICH BÖLL STIFTUNG
ԵՐԵՎԱՆ
Հարավային Կովկասի տարածաշրջան

ECOLUR
NEW INFORMATIONAL POLICY IN ECOLOGY

ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԵՆՍԱԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ, ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԼՈՒԾՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ

ՄՈԴՈՒԼ

ԵՐԵՎԱՆ 2026

Սույն մոդուլը պատրաստվել է «Էկոլուր» տեղեկատվական ՀԿ-ի կողմից «Քաղաքացիական հասարակության առաջնորդության և կենսաբազմազանության կառավարման ամրապնդումը՝ Հայաստանում կայանալիք COP17-ի նախօրեին» ծրագրի շրջանակում, որն իրականացվում է «Հայնրիխ Բյոլ հիմնադրամի հայաստանյան մասնաճյուղի աջակցությամբ:

Մոդուլի մեջ արտահայտված մտքերը հեղինակինն են և չեն արտահայտում Հայնրիխ Բյոլ հիմնադրամի Հարավային Կովկասի տարածաշրջանի երևանյան գրասենյակի տեսակետը:

I. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Սույն մոդուլի նպատակն է 2026թ. հոկտեմբերի 19-30-ը Հայաստանում անցկացվելիք ՄԱԿ-ի «Կենսաբազմազանության մասին» կոնվենցիայի Կողմերի 17-րդ համաժողովին (CBD COP 17) ընդառաջ ներկայացնել ՀՀ հարուստ կենսաբազմազանությունը և կենսաբազմազանության պահպանման և կայուն օգտագործման ոլորտում ՀՀ՝ միջազգային կոնվենցիաներով ստանձնած պարտավորությունները, ՀՀ Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնքին վերաբերելի ՀՀ կենսաբազմազանության ազգային ծրագրով նախատեսված թիրախները, Եղեգնաձորի կենսաբազմազանությունը, մարտահրավերները, հնարավոր լուծումները:

Մոդուլի մշակման համար ուսումնասիրվել են համապատասխան կոնվենցիաները, «Թեքսար AM0000029» էմերալդ թեկնածու տարածքի՝ ՀՀ առաջարկը, գնահատվել է համայնքի կենսաբազմազանության վրա ընդերքօգտագործման նախագծերի և այլ գործոնների հնարավոր բացասական ազդեցությունը, ՀՀ շրջակա միջավայրի նախարարի 2026 թ. ապրիլի 3-ի թիվ 100-Լ հրամանը, ոլորտին առընչվող ՀՀ իրավական ակտեր:

II. ՀԱՅԱՍՏԱՆԸ՝ CBD COP 17-Ը ՀՅՈՒՐԸՆԿԱԼՈՂ ԵՐԿԻՐ

2026թ. հոկտեմբերի 19-30-ը Հայաստանը կհյուրընկալի[1] Միավորված ազգերի կազմակերպության (այսուհետ՝ ՄԱԿ) «Կենսաբազմազանության մասին» կոնվենցիայի Կողմերի 17-րդ համաժողովը (CBD COP 17):

CBD COP17-ին Հայաստանում կքննարկվի 50-ից ավելի փաստաթուղթ: Կարևորագույն իրադարձությունը լինելու է Կունմին-Մոնրեալի գլոբալ կենսաբազմազանության շրջանակի իրականացման առաջին Գլոբալ վերանայումը (Global Review): Ակնկալվում է, որ CBD COP17-ը կվերածի այս վերանայման արդյունքները գործնական ուղեցույցների՝ մինչև 2030 թվականը գլոբալ հավակնությունների արագացված իրականացումն ապահովելու համար: CBD COP17-ի չորս հիմնական առաջնահերթություններն են.

1. Գլոբալ վերանայում՝ իրականացման առաջընթաց և հաշվետվողականություն
2. Ֆինանսներ և թվային գենետիկական հաջորդականության տվյալներ՝ ֆինանսավորում, Կալի հիմնադրամ (Cali Fund) և օգուտների բաշխում
3. Մասնակիցներ՝ բնիկ ժողովուրդներ, համայնքներ և շահառուներ
4. Սիներգիա՝ կենսաբազմազանություն, կլիմա, հողեր, ջուր:

[1] Decision adopted by the Conference of the Parties to the Convention on Biological Diversity on 1 November 2024 (https://www.cbd.int/doc/decisions/cop-16/cop-16-dec-27-en.pdf)

III. ԿԵՆՍԱԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ԿՈՆՎԵՆՑԻԱՆԵՐԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԸ

1. ՄԱԿ-ի Կենսաբանական բազմազանության մասին կոնվենցիան ընդունվել է 1992 թ. մայիսի 22-ին՝ Նայրոբիում (Քենիա) և պաշտոնապես բացվել ստորագրման համար նույն թվականի հունիսի 5-ին՝ Ռիո դե Ժանեյրոյի «Երկիր» գագաթնաժողովում: Այն ուժի մեջ է մտել 1993 թվականի դեկտեմբերի 29-ին: Կոնվենցիայի նպատակներն են.

- կենսաբանական բազմազանության պահպանում
- կենսաբանական բազմազանության բաղադրիչների կայուն օգտագործում
- գենետիկական ռեսուրսների օգտագործումից բխող օգուտների արդար և հավասար բաշխում:

Հայաստանն այս կոնվենցիային միացել է 1993թ.: 2004թ. մարտի 16-ին ՀՀ Ազգային ժողովի որոշմամբ վավերացվել է Կոնվենցիայի Կարթագենայի արձանագրությունը, որն ապահովում է գենետիկորեն մոդիֆիկացված օրգանիզմների (ԳՄՕ) անվտանգ մշակումը, տեղափոխումը և օգտագործումը, որոնք կարող են ունենալ բացասական ազդեցություն կենսաբազմազանության վրա՝ հաշվի առնելով նաև մարդու առողջությանը վերաբերող ռիսկերը:

2026թ. մարտի 25-ին ՀՀ Ազգային ժողովը վավերացրել է Կոնվենցիայի Նագոյայի արձանագրությունը, որն ապահովում է գենետիկական ռեսուրսների օգտագործումից առաջացող օգուտների արդար և հավասար բաշխում[2]:

2022թ. դեկտեմբերի 19-ին ՄԱԿ-ի Կենսաբազմազանության մասին կոնվենցիայի Կողմերի 15-րդ համաժողովի ժամանակ ընդունվեց Կունմին-Մոնրեալի կենսաբազմազանության պահպանման գլոբալ շրջանակը: Այն ներառում է 4 նպատակ 2050թ. համար և 23 թիրախ 2030թ. համար:
Նպատակներն են՝
1) Պաշտպանել և վերականգնել
2) Բարգավաճել բնության հետ ներդաշնակ
3) Արդարացիորեն բաշխել օգուտները
4) Ներդնել և համագործակցել:
Շրջանակի 23 թիրախներից 1-8-ն ուղղված են կենսաբազմազանության համար սպառնալիքների կրճատմանը, 9-13-ը՝ մարդկանց կարիքների բավարարմանը կենսաբազմազանության կայուն օգտագործման և օգուտների բաշխման միջոցով, 14-23-ն ուղղված են իրականացման և ներդրման համար գործիքներին և լուծումներին: Այն ուղենշային համաձայնագիր է, որը սահմանում է նպատակներ և կոնկրետ գործողություններ՝ մինչև 2050 թվականը դադարեցնելու կենսաբազմազանության կորուստը: Շրջանակի թիրախները ներառում են էկոհամակարգերի 30 տոկոսի վերականգնում, ցամաքի, ջրերի և ծովերի 30%-ի պահպանություն, ինվազիվ օտար տեսակների՝ ներմուծման նվազեցում մինչև 50%:

2. «Եվրոպայի վայրի բնության և բնական միջավայրի պահպանության մասին» կոնվենցիան (Բեռնի կոնվենցիա) ընդունվել է 1979 թ. սեպտեմբերի 19-ին Շվեյցարիայի

[2] https://www.arlis.am/hy/acts/223685

Բեռն քաղաքում: Կոնվենցիայի նպատակն է ապահովել վայրի ֆլորայի ու ֆաունայի և նրանց բնական միջավայրերի պահպանությունը՝ առանձնակիորեն կարևորելով այն տեսակները և բնական միջավայրերը, որոնց պահպանման համար անհրաժեշտ է համագործակցություն մի քանի պետությունների կողմից, ինչպես նաև խթանել նման համագործակցությունը:

Հայաստանը Կոնվենցիան վավերացրել է 2008թ. ապրիլի 14-ին, որն ուժի մեջ է մտել 2008թ. օգոստոսի 1-ից[3]:

Հայաստանը ներգրավված է Կոնվենցիայի կարևոր գործիքներից մեկում՝ Էմերալդ ցանցում, որի նպատակներից մեկն է առանձնացնել և պահպանել կենսաբազմազանության համար արժեքավոր տարածքները: Հայաստանը ներկայացրել է 23 էմերալդ թեկնածու տարածք, որոնք ընդգրկել են 1.033.719,5 հա, կամ երկրի տարածքի 34,7%-ը: Մի քանի տարի է՝ տեղի է ունենում այդ տարածքների վերանայման գործընթաց: «Եվրոպական միությունը հանուն շրջակա միջավայրի (EU4Environment) ծրագրի» շրջանակում Համաշխարհային բանկը պատրաստել է «Հայաստանում Էմերալդ ցանցի թեկնածու տարածքների վերանայման առաջարկություններ», ըստ որոնց առաջարկվում է 30 թեկնածու տարածք 23-ի փոխարեն, որոնց ընդհանուր տարածքը կկազմի 707,739.22 հեկտար կամ երկրի 23.8%-ը:

«Վայրի կենդանիների միգրացվող տեսակների պահպանության մասին կոնվենցիա»-ն (Բոննի կոնվենցիա) ընդունվել է 1979թ. հունիսի 23-ին Գերմանիայի Բոնն քաղաքում: Այն ուժի մեջ է 1983 թ-ից:

Կոնվենցիայի նպատակն է պահպանել միգրացվող վայրի կենդանիները, նրանց կենսամիջավայրերը և միգրացիոն ուղիներն ամբողջ աշխարհում: Այն գործում է ՄԱԿ-ի Շրջակա միջավայրի ծրագրի (UNEP) հովանու ներքո և կենսաբազմազանության պահպանության գլոբալ համակարգի կարևոր բաղադրիչ է:

Հայաստանն այս Կոնվենցիային միացել է 2006թ.: Այն ուժի մեջ է մտել 01.03.2011թ-ից:

4. «Միջազգային կարևորության խոնավ տարածքների մասին, հատկապես որպես ջրաթռչունների բնակավայր» կոնվենցիան (Ռամսարի կոնվենցիա)[4] ընդունվել է 1971թ.: Կոնվենցիան ջրաճահճային տարածքների պահպանությանը նվիրված առաջին համաշխարհային բնապահպանական համաձայնագիրն է: Դրա հիմնական նպատակն է ջրաճահճային տարածքների պահպանությունն ու «խելամիտ օգտագործումը» (wise use)՝ կենսաբազմազանության և մարդկային բարեկեցության համար:

[3] https://www.coe.int/en/web/conventions/full-list?module=signatures-by-treaty&treatynum=104
[4] https://www.unesco.org/en/legal-affairs/convention-wetlands-international-importance-especially-waterfowl-habitat

ՀՀ-ն կոնվենցիային միացել է 1993թ.: ՀՀ-ում ներկայում միջազգային նշանակության Ռամսարյան տարածք են ճանաչվել ԵՒանա և Արփի լճերը, Խոր Վիրապի ճահճուտները:

IV. ՀՀ ԿԵՆՍԱԲԱՆԱԿԱՆ ԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ 2026-2030 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳՐՈՎ ԵՂԵԳՆԱԶՈՐ ՀԱՄԱՆՔԻՆ ՎԵՐԱԲԵՐԵԼԻ ԹԻՐԱԽՆԵՐԸ

ՀՀ շրջակա միջավայրի նախարարի 2026 թ. ապրիլի 3-ի թիվ 100-Լ հրամանով[5] հաստատվել է ՀՀ կենսաբանական բազմազանության պահպանության նպատակները և 2026-2030 թվականների գործողությունների ծրագիրը: Սահմանվել է 30 թիրախ, որոնք բխում են Կունմին-Մոնրեալի (ԿՄԿ) կենսաբազմազանության գլոբալ շրջանակի 23 թիրախներից: Ի տարբերություն ԿՄԿ-ի, Հայաստանը չի սահմանել 30 տոկոս պահպանության թիրախ, այլ նախատեսել է մինչև 2030թ. պահպանության տակ վերցնել երկրի տարածքի 20 տոկոսը որի մեջ ներառվելու են բնության հատուկ պահպանվող տարածքները, անտառները, Էմերալդ թեկնածու տարածքները, էկոլոգիական միջանցքները և արդյունավետ պահպանության այլ տարածքներ:

Հրամանով սահմանված ազգային թիրախներից Եղեգնաձոր համայնքին վերաբերելի են հետևյալները՝

Թիրախ 1. ներառել կրիտիկական կենսամիջավայրերը տարածական պլանավորման մեջ

Թիրախ 3. ընդլայնել բնության հատուկ պահպանվող տարածքների ցանցը

Թիրախ 5. պահպանել գլոբալ վտանգված տեսակները և կառավարել մարդ-վայրի կենդանիներ կոնֆլիկտը

Թիրախ 9. նվազեցնել Հայաստանում ջրային ռեսուրսների աղտոտումը

Թիրախ 11. ներդնել կայուն որսորդության փորձառություններ

Թիրախ 12. խթանել կայուն գյուղատնտեսությունը

Թիրախ 13. կիրառել բնահեն լուծումներ

Թիրախ 14. խթանել բնակավայրերի, այդ թվում քաղաքների կանաչ զարգացումը

Թիրախ 15. ապահովել գենետիկական ռեսուրսների արդար հասանելիությունը և օգտագործումը

Թիրախ 16. բարձրացնել կենսաբազմազանության պահպության կարևորությունն ու նշանակությունը տեղականից մինչև ազգային մակարդակներում

Թիրախ 17. ներդնել բնապահպանական, սոցիալական և կառավարչական կարգավորումներ

Թիրախ 19. բարելավել թափոնների վերամշակման մակարդակը և խթանել կայուն սպառման ընտրության հնարավորությունները

Թիրախ 20. նվազեցնել սննդի գերսպառումը և սննդի թափոնների գոյացումը,

[5] https://environment.gov.am/api/assets/aec1869b-4354-4df9-9d8e-3eff8998a526

Թիրախ 22. նվազեցնել կենսաբազմազանության վրա վնասակար ազդեցությունները

Թիրախ 23. գույքագրել ներքին ֆինանսական միջոցները

Թիրախ 24. գույքագրել միջազգային ֆինանսական,

Թիրախ 28. խրախուսել հանրության մասնակցությանը կենսաբազմազանության վերաբերյալ հետազոտություններում և բարձրացնել բնապահպանական իրազեկվածության մակարդակը,

Թիրախ 29. ներգրավել համայնքներին բնապահպանական կառավարման մեջ

Թիրախ 30. Կենսաբազմազանության պահպանման ոլորտում ապահովել գենդերային հավասարությունը:

V. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՐՈՒՍՏ, ԲԱՑԻ ՎՏԱՆԳՎԱԾ ԿԵՆՍԱԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Հայաստանը, լինելով Կովկասի տարածաշրջանի մաս, ճանաչված է որպես աշխարհի կենսաբազմազանության 36 թեժ կետերից մեկը: Կլիմայական պայմանները և բազմատեսակ լանդշաֆտները նպաստել են բարձր աստիճանի էնդեմիզմ ունեցող հարուստ կենսաբազմազանության առաջացմանը:

Հայաստանի տարածքը մոտ 3800 տեսակի անոթավոր բույսի, 4200 տեսակի սնկի, 685 տեսակի քարաքոսի, 428 տեսակի ջրիմուռի, 399 տեսակի մամուռի աճելավայր է: Հայաստանի կենդանական աշխարհը ներառում է շուրջ 17000-17500 կենդանի օրգանիզմ, որոնցից 83 տեսակի կաթնասուն, 353 տեսակի թռչուն, 53 տեսակի սողուն, 8 տեսակի երկկենցաղ, 39 ձկնատեսակ և ավելի քան 11000 անողնաշարավոր կենդանատեսակ:

ՀՀ Կարմիր գրքում գրանցված են՝ 452 բուսատեսակ, 40 սնկատեսակ, 155 ողնաշարավոր կենդանի և 153 անողնաշարավոր կենդանատեսակ:

Աշխարհում շարունակվող և արձանագրվող կենսաբազմազանության կորատից, սակայն անմասն չէ նաև ՀՀ-ն::

Հանքարդյունաբերության և այլ ծանր արդյունաբերության տեսակների համար կառուցվող խոշոր ենթակառուցվածքները, հիդրոէներգետիկան, անտառհատումները, անտառային հրդեհները, գյուղատնտեսությունը, այդ թվում՝ արոտավայրերի չկարգավարված արածեցումը, ռեկրեացիան և զբոսաշրջությունը, կենցաղային և շինարարական թափոններով տարածքների աղտոտումը, վայրի ուտելի բուսատեսակների չկարգավորված հավաքչությունը, վայրի կենդանիների և թռչունների ապօրինի որսը, հիվանդություններն ու վարակները, ինվազիվ կենսատեսակների տարածումը, կլիմայի փոփոխությունն իրենց բացասական հետևանքն են թողնում կենսաբազմազանության վրա՝ կրճատելով նրանց թվաքանակը և փոխելով նրանց տեսակային կազմը:

VI. ԵՂԵԳՆԱՁՈՐ ԽՈՇՈՐԱՑՎԱԾ ՀԱՄԱՅՆՔԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ, ԿԵՆԴԱՆԱԿԱՆ ԵՎ ԲՈՒՍԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԸ

Եղեգնաձոր համայնքը ՀՀ Վայոց ձորի մարզի բազմաբնակավայր համայնքներից է, ներառում է՝ Եղեգնաձոր, Գետափ, Գլաձոր, Վերնաշեն, Մալիշկա բնակավայրերը, գտնվում է ծովի մակարդակից 1250մ բարձրության վրա: Գտնվում է Արփա գետի ավազանում: Վարչական տարածքը 24.388,70 հա է, բնակչության թիվը 2026թ-ին՝ 20896 մարդ: Համայնքը հիմնականում գյուղատնտեսական է, զարգացած է պտղաբուծությունը, խաղողագործությունը, գինեգործությունը, չորացած մրգերի արտադրությունը, մեղվաբուծությունը: Բնակչությունը զբաղվում է նաև խոշոր և մանր եղջերավոր անասունների, խոզերի բուծմամբ, վերջին տարիներին բուռն թափ է ստացել տուրզմը: Ունի աղբավայր:

Համայնքի վարչական տարածքը Հայաստանի՝ կենսաբազմազանությամբ հարուստ լեռնային էկոհամակարգերով տարածքներից է: Եղեգնաձորի տարածաշրջանը Հայաստանի հարավային հատվածի կարևորագույն էկոլոգիական միջանցքներից է: Այն ապահովում է կենդանիների տեղաշարժը երկրի կենտրոնական և հարավային լեռնային էկոհամակարգերի միջև՝ միացնելով կենսաբազմազանության մի շարք առանցքային տարածքներ, այդ թվում՝ նախատեսվող «Ջերմուկ» ազգային պարկի շրջակայքը, «Խոսրովի անտառ» պետական արգելոցի հարավային հատվածները և «Զանգեզուր» կենսոլորտային համալիրի ուղղությունը:

Տարածքում առկա բուսական և կենդանական բազմազանությունն ունի բարձր էկոհամակարգային արժեք:

Այն բազմաթիվ կենդանատեսակների միգրացիայի, կերային բազայի, բազմացման, կայուն բնակեցման, մի քանի բնության հատուկ պահպանվող տարածքներ և էկոմիջանցնքներ կապող օղակ է:

Բարձր լեռնային, կիսաանապատային և անտառատափաստանային գոտիների համադրությունը ստեղծում է բազմազան էկոհամակարգեր, որոնցում հանդիպում են բազմաթիվ բուսական և կենդանական տեսակներ: Եղեգնաձորի բնական տարածքները ներառում են լեռնային արոտավայրեր, անտառներ և ջրային ակվատորներ, որոնցով ապահովվում են բազմաթիվ էնդեմիկ և գենետիկ ռեսուրսներ:

Կենդանական աշխարհ

Համայնքի վարչական տարածքում հանդիպում են.

- Կաթնասուններ՝ բեզոարյան այծ/wild goat, հայկական մուֆլոն/ Armenian mouflon, վայրի խոզ/Sus scrofa, գայլ/Canis lupus, աղվես/Vulpes vulpes, գորշ արջ/ Brown bear, նապաստակների տեսակներ:
- Թռչուններ՝ լոր, քարակաքավ, տարբեր տեսակի անգղեր և արծիվներ, այդ թվում բերկուտ/olden eagle
- Ձկներ՝ կարմրախայտ, բեղլու, կողակ (արտաքին գետային էկոհամակարգերում):
- Սողուններ՝ ներառյալ հայկական իժ/Armenian viper և սողունների այլ տեսակներ:

Յանկացած կենդանական տեսակ ունի իրեն յուրահատուկ բնակմիջավայրը՝ լեռնային արոտավայրեր, ջրվեժներ, գետային ձկնաբնակային միջավայրեր: Որոշ տեսակներ գրանցված են ՀՀ Կարմիր գրքում:

Բուսական աշխարհ

Համայնքի վարչական տարածքում հանդիպում է մոտ 1650 բուսատեսակ՝ ներառյալ բազմաթիվ դեղաբույսեր, ուտելի բույսեր: Տարածքում աճում են մի շարք հազվագյուտ և արժեքավոր բուսատեսակներ, որոնց արեալն ընդգրկում է սարալանջային, տափաստանային ու մարգագետնային էկոհամակարգեր:

Հատկապես տարածված են տափաստանային խոտաբույսերը, լեռնային մարգագետնային բույսերը, կիսաանապատային բուսականությունը, դեղաբույսերը և վայրի պտղատու տեսակներ: Տարածքում հանդիպում են նաև Հայաստանի Կարմիր գրքում գրանցված բույսերից՝ Իրիս Նազելի/Iris elegantissima, Կակաչներ՝ Յուլիա/ Tulipa julia, Սոսնովսկու պիրուս / Pyrus sosnovskyi: Այս տեսակները կարևոր են ոչ միայն ազգային, այլ նաև տարածաշրջանային գենետիկական ռեսուրսների պահպանության համար:

Տարածված են նաև տեղական՝ կիսաանապատային, մամռածածկ, բարձր լեռնային լճակներ և գոտիներ, որոնք նպաստում են տարատեսակ էկոհամակարգերի ձևավորմանը:

Տարածքում նախատեսվող հանքարդյունաբերական նախագծերը կարող են առաջացնել լուրջ էկոլոգիական ռիսկեր՝ կենսամիջավայրերի կորուստ և մասնատում, կենդանիների ջրարբիացման վայրերի աղտոտում և փոփոխություն, պայթեցումները և ծանր տեխնիկայի շարժը կարող են վանել կենդանիներին իրենց բնական միջավայրից, նոր ճանապարհների բացման հետևանքով կաճեն որսագողության ռիսկերը:

Եղեգնաձորի Թեք սարի տարածքում, որտեղ գտնվում է Գլաձորի բազմամետաղային հանքավայրը, հանդիպում է Հայաստանի ֆաունայի 131 թռչնատեսակ, այդ թվում 101 բնադրող և 30 տեսակ, որոնք հանդիպում են միգրացիայի ժամանակ կամ բնադրման շրջանում որպես սնման վայր[6]: Տարածքի 31 թռչնատեսակի պահպանման նպատակով այդ տարածքը ներկայացվել է որպես էմերալդ ցանցի պահպանվող թեկնածու տարածք: «EU4Environment» ծրագրի շրջանակներում կատարված ուսումնասիրություններով[7] առաջարկվում է Թեքսար AM0000029 տարածքի թեկնածության քննարկում: Նախատեսվում է, որ այն կունենա 11 381,29 հա մակերեսով 16 թիրախ կենսամիջավայրով տարածք, որը կապահովի 1 բույսի՝ ռուսական իժախոտի/Echium russicum, 1 անողնաշարավորի, 31 տեսակի թռչունի և 11 տեսակի կաթնասունների պահպանությունն ու կառավարումը: Նշվում է, որ Թեքսար լեռն առանձնակի

[6] Aghababyan K, Khanamirian G, Khachatryan A, Martirosyan B, Grigoryan V, Zuerker T and Baloyan S Evaluation of Importance of Teksar Mountain of Armenia for Bird and Butterfly Protection / International Journal of Zoology and Animal Biology, Volume 5 Issue 5, DOI: 10.23880/izab-1600040

[7] https://www.eu4environment.org/app/uploads/2024/10/Recommendations-for-Review-of-the-Candidate-Emerald-Sites-in-Armenia-ARM.pdf

գնահատում և ուշադրություն է պահանջում որպես պոտենցիալ կարևորագույն թռչնաբանական (IBA) և թիթեռների տարածք (PBA)։

Եղեգնաձորի տարածքում՝ «Կենդանական աշխարհի օբյեկտների (որսահանդակների) պահպանության, պաշտպանության, օգտագործման կարգը և որսահանդակների ցանկը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2016 թվականի օգոստոսի 18-ի N 860 - Ն որոշմամբ[8] սահմանված ցանկում որպես «Վայոց ձորի Եղեգիսի որսահանդակի» մաս, դիտարկվում են գայլ, շնագայլ, աղվես, լուսան, գորշուկ, քարակզաքիս, նապաստակ, վայրի խոզ, քարակաքավ, լոր, մեղվակեր, աղավնիներ, կտցարներ, սև կեռնեխ, դաշտային և տափաստանային արտույտներ, ջրլող թռչուններ։

VII. ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԳԼԱԶՈՐԻ ԲԱԶՄԱՄԵՏԱՂԱՅԻՆ ՀԱՆՔԱՎԱՅՐԻ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՀԵՏԱԽՈՒԶՄԱՆ ԵՎ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՅԼ ԳՈՐԾՈՆՆԵՐԻ ՀՆԱՐԱՎՈՐ ՌԻՍԿԵՐԸ ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՎՐԱ

CBD COP17-ի կարևոր սկզբունքներից մեկը տնտեսական ծրագրերի, այդ թվում հանքարդյունաբերական ծրագրերի և կենսաբազմազանության ինտեգրված կառավարումն է: Այս տեսանկյունից, հանքարդյունաբերական նախագծերը պետք է գնահատվեն ոչ միայն տնտեսական օգուտների տեսանկյունից, այլև բնության ամբողջականության, բնության հատուկ պահպանվող տարածքների պահպանման, արձանագրված գործընթացների վճակագրական տվյալների և երկարաժամկետ էկոլոգիական ազդեցությունների նվազեցման տեսանկյունից (այդ թվում՝ ջրի, հողի, էնդեմիկ հարուստ բնական միջավայրերի պաշտպանության) տեսանկյունից։

Գլաձորի բազմամետաղային հանքավայրը գտնվում է Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնքի վարչական տարածքում/Թեքսար։

Գլաձորի հանքավայրում առաջին երկրաբանահետախուզական աշխատանքները կատարվել են նախորդ դարի 20-ական թվականներին, վերսկսվել՝ 1950-1964թթ.: Սակայն հանքը չի շահագործվել: 2007-2009թթ. ընթացքում հանքում հետախուզական աշխատանքներ է իրականացրել «Վայք Ռեսուրս» ՍՊԸ-ն: Ըստ 2009թ. հաստատված հանքաքարի պաշարները կազմում են 14474,0 հազար տոննա, որտեղ ոսկու քանակությունը կազմում է 9789,1 կգ (0,68 գ/տ)։

Այնուհետև, հանքը շահագործելու հավակնություններ է ունեցել «Վայք Մետալ» ՍՊԸ-ն: 2016թ. ընկերությունը հայտ է ներկայացրել ՀՀ բնապահպանության նախարարություն Գլաձորի բազմամետաղային հանքի շահագործման համար: Սակայն նախարարությունը բացասական փորձաքննական եզրակացությունն է տվել այդ հայտին։

Այսպիսով մի քանի ընկերություններ՝ ներառյալ «Մետալ Գոլդ» ՍՊԸ, «Ասսաթ»,ՍՊԸ «Վայք մեթալ» ՍՊԸ, արդեն մի քանի տարի է՝ փորձում են իրականացնել Գլաձորի

[8] https://arlis.am/hy/acts/135650/latest

բազմամետաղային հանքավայրի երկրաբանական ուսումնասիրություններ, հետազոտում հետագա շահագործման նպատակով:

Այս տարիների ընթացքում համայնքի բնակիչները դիմադրել են համայնքում հանքարդյունաբերության ներդրման օրակարգին և որպես հանքարդյունաբերությանն այլընտրանք՝ իրենց համայնքի զարգացումը կապում են գյուղատնտեսության, գինեգործության և տուրիզմի հետ: Ըստ նրանց՝ հեռանկարային է խաղողագործությունն ու այգեգործությունը:

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման (այսուհետ՝ ՇՄԱԳ) նպատակով անցկացվող բոլոր հասարակական լսումների, քննարկումների ժամանակ բնակիչների մեծամասնությունը հանդես է եկել հանքի շահագործմանը դեմ՝ հիմնավորելով շրջակա միջավայրի, ջրային համակարգերի և կենսաբազմազանության պահպանման կարևորությունը:

Համայնքի բնակիչները, համայնքային նախաձեռնող խմբերը, բնապահպանական կազմակերպությունները պնդում են, որ տարածքը ներառյալ բոլոր խմելու և ոռոգման ջրերը և բնական աղբյուրները հանքարդյունաբերության արդյունքում ենթակա են կենսապահպանական վտանգների: Որոշ դեպքերում բնության համար պայքարողների դեմ ընդերքօգտագործողները ներկայացնում են դատական հայցեր

Հանքարդյունաբերության ծրագրերի ռիսկերն են.

1. Հանքագործությունն ուղեկցվում է հողի վերին շերտի հեռացմամբ, բուսածածկույթի ոչնչացմամբ, ինչը կհանգեցնի կենդանիների բնակավայրերի մասնատման և էնդեմիկ տեսակների կորստի, կառաջացնի գենետիկ շեղումներ, կկրճատի տեսակների բնակավայրերը:
2. Հանքարդյունաբերությունում օգտագործվում են դժվար քայքայվող քիմիական նյութեր, որոնց արտահոսքը կամ չհաշվարկված պահեստավորումը կարող է տարիներով աղտոտել ջրերը և հողը: Այդ նյութերը լուրջ վտանգ են գետերի, ստորգետնյա ջրերի և կենսաբանական շղթաների համար: Ջրային ռեսուրսների համար վտանգ են ներկայացնում նաև հանքարդյունաբերության հետևանքով երկարաժամկետ թթվային դրենաժները: Սա կարող է ազդել ոչ միայն տեղական էկոհամակարգերի, այլև գյուղատնտեսության վրա:
3. Հանքարդյունահանման համար անհրաժեշտ ճանապարհների բացումը, ենթակառուցվածքների շինարարությունը, էլեկտրական գծերի անցկացումը, արտադրական տարածքների կառուցումը կարող են առաջացնել նոր վտանգներ՝ փլուզումներ, հողերի փչացում, անհետացող տեսակների համար նոր ճանապարհների և ցանցերի խափանումներ, ազդակիր կենսաբնակավայրի բնակիչների բնական շարժման խափանման հետևանքով բնական միջավայրերի մուտքի նոր ուղիների ստեղծում, որոնք կարող են վտանգել խոշոր կաթնասունների բնական միգրացիոն ուղիները:

ՀՀ շրջակա միջավայրի նախարարի 2026թ. ապրիլի 3-ի N 100-Լ հրամանով նախատեսված մի շարք գործողություններ, որոնք առընչվում են տարածքի կենսառեսուրսների պահպանության ոլորտին, մասնավորապես՝ Հայկական մուֆլոնի

պոպուլյացիայի վերականգման ծրագրի նախաձեռնում, մարդ-վայրի կենդանիներ կոնֆլիկտի դեպքերի գրանցման, գույքագրման և քարտեզագրման ամբողջական համակարգի ստեղծում, մարդ-վայրի կենդանիներ կոնֆլիկտի կառավարման և/կամ մեղմման մեխանիզմների ստեղծում, մարգագետինների և արոտավայրերի կառավարման պլանների կազմում և այն չեն կարող չեզոքացնել հանքարդյունաբերական ծրագրի ազդեցության ռիսկերը:

Համայնքի վարչական տարածքի կենսաբազմացանությանն սպառնացող վտանգներից են նաև՝

1. **Վայրի կենդանիների ապօրենի որսը և ձկնորսությունը, ինչպես նաև դրանց կանոների չպահպանումը**,

2. **Գյուղատնտեսություն և սննդարդյունաբերությունը**, (հողերի և էկոհամակարգերի ոչ կայուն օգտագործում՝ դեգրադացիա, հիվանդությունների և վնասատուների դեմ պայքար ոչ օրգանիկ և ոչ կենսաբանական մեթոդների կիրառմամբ), ինչի արդյունքում առաջանում է կենսամիջավայրերի խաթարում: Գյուղատնտեսական նպատակներով կատարվող ջրառի արդյունքում տուժում են գետերի հուները, որի պատճառով ոչնչանում են ափամերձ և ջրային էկոհամակարգերի տարրերը, հատկապես՝ ձկնատեսակներն ու նրանց կերի բազան: Գյուղատնտեսության զարգացման նպատակով օգտագործվող պարարտանյութերը ներթափանցում են գետեր կամ լճեր՝ վտանգելով կենսաբազմազանությունը: Լուրջ է նաև գյուղատնտեսական կենդանիների չկանոնակարգված արածեցման հետևանքով այդ տարածքներում բնական սերմնային վերականգնման խաթարումը:
3. **Ռեկրացիան և զբոսաշրջությունը** (կենցաղային թափոններով աղտոտում, վայրի գեղազարդ ծաղիկների հավաք)
6. **Կենսառեսուրսների գերօգտագործումը** (արոտավայրերի գերարածեցում, ուտելի խոտաբույսերի և դեղաբույսերի չկանոնակարգված հավաքչություն, անօրնական որս և ձկնորսություն), ինչը հանգեցնում է կենսաբազմազանության լուրջ կորուստների, կամ որի արդյունքում արժեքավոր կենսատեսակները փոխարինվում են ոչ արժեքավորներով:

VIII. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԿԵՆՍԱՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԵՎ ԿԱՅՈՒՆ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ

Ազգային և տարածաշրջանային մակարդակներում հաշվի առնելով CBD COP 17-ի ձեռքբերումները՝ անհրաժեշտ է.

1. Սահմանել Եղեգնաձորի տարածքի հիմնական կենսամիջավայրերը:
2. Քարտեզագրել վայրի կենդանատեսակների միգրացիոն ուղիները:
3. Համայնքում նախատեսվող գործունեությունների և ծրագրերի ՇՄԱԳ փաստաթղթերի հանրային լսումների գործընթացում նախաձեռնողից պահանջել ամբողջ լանդշաֆտի վրա, դրանց կումուլյատիվ, ինչպես նաև գինեգործության և տուրիզմի վրա ազդեցությունների գնահատում:

4. Համայնքի տարածքում նախատեսվող համայնքային ծրագրերով նախատեսել էկոլոգիական միջանցքների պահպանման և երկարաժամկետ մոնիթորինգի ու հաշվետվողականության պարտավորությունների բաղադրիչներ։
5. Խրախուսել համայնքում վայրի կենսաբազմազանության տեսակների վրա հիմնված կայուն գործունեությունների, արտադրանքների և ծառայությունների զարգացումը՝ առաջնություն տալով ավանդական կայուն օգտագործման ձևերին։
6. Ստեղծել համայնքային մակարդակով մարդ–վայրի բնություն կոնֆլիկտի արձագանքման մեխանիզմներ։
7. Պատրաստել և հաստատել բեզոարյան այծի պահպանության համայնքային պլաններ։
8. Իրականացնել վայրի կենդանիների տեղաշարժի և կոնֆլիկտային տարածքների մշտադիտարկում։
9. Մշակել և ներդնել վայրի կենդանիներից եկող վնասների փոխհատուցման կամ կանխարգելման աջակցության համայնքային մեխանիզմներ, ներառելով դրանց թափանցիկ հաշվետվողականության բաղադրիչը։
10. Կիրառել կանխարգելիչ միջոցներ՝ ցանկապատեր, հովվաշներ, անվտանգ աղբահանություն, անասնագոմերի պաշտպանություն և այլ բնապահպանական լուծումներ։
11. Համայնքին ներգրավել վայրի կենդանիների պահպանության ծրագրերի մշակման և իրականացման գործընթացում։
12. Համայնքում պարբերաբար իրականացնել կենսաբազմազանության պահպանության վերաբերյալ իրազեկվածության արշավներ՝ միջոցառումների ժամանակ ապահովելով գենդերային հավասարությունը։
13. Համայնքում ներդնել կայուն որսորդության պրակտիկաներ։
14. Ավարտին հասցնել դեռևս 2021թ. սկսված Վերնաշենի 3,5մլն.խմ ծավալով ջրամբարի կառուցման գործընթացը, որը կապահովի մոտ 800հա գյուղատնտեսական հողերի ոռոգումը՝ համայնքում խթանելով կայուն գյուղատնտեսության զարգացումը։